Դրանգիլվանիոյ »[2]։ Իր « այցարարութեան » նուռարն է Տէր Յովհաննէս Միխիթար Յովհաննան, զոր մեր հրատարակած թուղթին սկիզբը իրեն աշակերտ կ'անուանէ։ Դրանսիլուանիա գալուն պատճառը կ'ըսէ վերջապէս՝ « ի տես բարեկամացս և յայց առնել եկեղեցեացս Հայոց »։ Միւնոյն ակնարկութեան կը հանդիպինք արդէն վերոյիշեալ երեք եղբայրութեանց մասին տուած կոնդակներուն սկիզբները՝ ուր կ'ըսէ, « գալով մեր այսր ի տես սիրելի ազգականաց և բարեկամաց մերոց » (ԳՈՎՐԻԿԵԱՆ. « Դրանսիլուանիոյ Հայոց մետրապոլիտը կամ Նկարագիր Կերբա Հայաքաղաքի ». Վիեննա 1896. էջ 50 – 91)։

Ամենապատիւ Հայր ի Քրիստոս, և Տէր Վարդապետ

Գալով իմ այսր ի Դրանգիլվանիայ ի տես բարեկամացս, և յայց առնել եկեղեցեացս Հայոց, զտի զաշակերտն իմ զՏէր Յովհաննէսն դարձեալ ի Հռոմայ՝ բերելով զյոգնափափագելի պատասխանիդ իմոյս Տրակի։ Որով անասելաբար զուարճացայ, և ես առաւել ի ջերմեռանդութիւն և ի պատուելութիւն վեհանձնութեանդ բորբոքեցայ։ Եւ աղաչեմ զի և առ ապա շարունակել զՀայրախնամ իղձդ առ իս մի՛ ծանրասցիս։ Շնորհակալ գոլով յաղագս ամենայնի շնորհի, զոր Գերարգելի Հայրութիւնդ ցուցանես ի վերայ իմ։ Ահա ես շնորհիւ Տեառն աւարտեցի զԱյցարարութիւն իմ ասա ի Հայաքաղաքն Կեռլայ, և զկնի սակաւ աւուրց չուէլոց եմ յիպիշվալօվն, և անտի նախ ձմեռն սաստկանալ սկսցի, յերկիրն իմ դարձայց։ Սահմանելով իմ զեղբայրութիւնս ոմանս Աշխարհականաց, և տրամադրելով զեկեղեցական իրս, ամենեցուն հաւանութեամբն ի յերկրիս՝ թէ Կղերց և թէ ժողովրդականաց՝ հաստատեցաւ նոր Տօմարն Հռոմէական, որպէս զի ոչ միայն Զատիկն, այլ և այլք հանդիսաւորագոյն տօնքն, ևս առաւել Սրբոց Առաքելոցն միշտ ըստ Հռոմէականին շրջեսցին, զոր ինքնին շարագրեցի (թէպէտ [յ]առաջագոյն ունէի զբազում ինչ ի պատրաստի) զխրատս, այսինքն Ռուպրիգաս, զաղիւսակս և զտօնացոյցն ինքն, բայց անխախտ պահելով զԾէսն մեր։ Զի անհնարին է ազգիս մերոյս, այլ՝ աստանօր այլապէս պահել, մանաւանդ զի և բոլոր Ազգն Մաճառաց թէ ի հոգևոր և թէ յաշխարհական կարգէն զայս Տօմարս ամենեին կամին։ Եւ ի սոցանէ, նաև յիմբէրատորէն խնստանցեալէս առ Սուրբ Առաքելական Աթոռն մերայինքս, և սոքա ևս ընդունելոց են, վասն որոյ յուսամք զերջանիկ ելս նորին։ Հոգացայց, զի այդանօր ի վէնէտիկ ծախիւք ժողովրդեանս այսորիկ տպեսցի, միայն թէ Սուրբ Աթոռն ակն արկցէ։ Զսրմէ ես յետոյ ոչ հեղգացայց Գերանձնութեանդ զեկուցանել յերկրէ իմմէ, քանզի և մեք Լեհացիքս ոգւով չափ բաղձամբ տեսանել զայսպիսի տօմարն։ Փոստայիւ յղեալ ոչ էհաս առ իս, թերևս ի դառնալն իմում ի տեղի իմ, գտից։ Ամենապատիւ Տեառն խաչատուր Վարդապետին զհպատակութիւն իմ բացատրեմ։ Աղաչեմ զվերոյ գրեալսն յայտնել նմա, և ասել նմա, թէ հնար իցէ զՏօմարն իմ զայն, զոր Սուրբ Ժողովն յղեալ է նմա ի տեսանել և ի քննել, տարածել ջանասցի, զի մի՛ պատճառաւ ինչ խափանեսցի այս նոր տօմարս, զոր առաքելոց եմք։ Հուսկ յետոյ խնդրեմք անմեղադիր լիցի ինքն և Գերարգելութիւնդ, զի ոչ յատուկ ձեռամբ իմով կարացի գրել, վասն զի սակաւ ինչ զախտ ջերման կրելով մատունք իմ դողդոջան։ Արդէն զիս սրբափայլ Աղօթիցդ յանձնելով զԱյդ խոնարհաբար համբուրեմ. մնալով

Գերապատիւ Վեհանձնութեանդ

ի Հայաքաղաքն
1729 Սեպտ. 28

Ամենախոնարհ ծառայ
Ստեփաննոս Ստեփանեան
Վարդապետ և Օֆիցեալ Ստանիսլաւօվա

---

2. Կը գտնենք իր մասին նաև հետևեալ տիտղոսները. « Աւագն Հոգաբարձուաց գաւառին », « ազգն Կամենիցու, Ստանիսլաւու և այլոց քաղաքաց » (Հ. ԱԼԻՇԱՆ. Կամենից. էջ 156, 150)։